ԿԱՋՄՎԱԾ է 02.07.2018թ
ՀԱՍՏԱՏՎԱԾ է
«ՄԵՐ ՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
«02» 07 2018թ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝
ՎԱՉԱԳԱՆ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՏՊԱԳՐՎԱԾ է 5 ՕՐԻՆԱԿ
ՕՐԻՆԱԿ 5
ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
Գրանցման ամսաթիվ 28.09.2018թ
Գրանցման համար 211.122.1035024
ՀԿՀՀ 02683848

«ՄԵՐ ՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է»

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Մեր տունը Հայաստանն է» կուսակցությունը (այսուհետև՝ Կուսակցություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ կամավորության հիմունքներով ձևավորված քաղաքացիների միավորում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, սույն Կանոնադրությանն ու իր Ծրագրին համապատասխան:

1.2 Կուսակցությունը՝ ՀՀ Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման պահից հանդիսանում է իրավաբանական անձ և հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով նպաստում է ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:

Կուսակցությունն ունի կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, դրոշմ, պաշտոնաթղթեր, հաշվարկային հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամով, այնպես էլ՝ արտարժույթով:

1.3 Կուսակցության անվանումն է՝ «Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն (հապավումը՝ ՄՏՀԿ): Մեր տունը Հայաստանն է չի թարգմանվում այլ լեզուներով:

1.4 Կուսակցության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոնդ փող. 88տուն:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Կուսակցության նպատակներն ու խնդիրներն են՝

ա) Պաշտպանել Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը, ՀՀ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, նպաստել իրավական, ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ օրինական միջոցներով իշխանության հասնելու միջոցով:

բ) Ազգային գլոբալ հիմնախնդիրների վերաբերյալ կազմակերպել քննարկումներ, ուսումնասիրել հասարակության լայն շերտերի կարծիքը և առաջարկություններ ներկայացնել դրանց լուծման վերաբերյալ:

գ) Սատար կանգնել զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, հատուկ ուշադրություն դարձնել երիտասարդների ռազմա-հայրենասիրական դաստիրակությանը՝ այդ ուղղությամբ մշտապես իրականացնել տարբեր միջոցառումներ:

դ) Նպաստել Հայաստանում աշխատատեղերի ստեղծմանը, տնտեսության բոլոր ճյուղերի, գիտության, մշակույթի և սպորտի զարգացմանը:

ե) Նպաստել Հայաստանում ազատ և արդար ընտրությունների անցկացմանը, ընտրողների քաղաքական կամքի ազատ արտահայտմանը

զ) Պայքար մղել Հայաստանում կոռուպցիայի բոլոր դրսևորումների դեմ՝ դրան մասնակից դարձնելով հասարակության լայն զանգվածներին:

է) Բազմակողմանի ուսումնասիրել Հայաստանից բնակչության արտագաղթի պատճառները,նպաստել դրանց վերացմանը և հետևողական քարոզչություն իրականացնել դադարեցնելու այդ ազգակործան երևույթը:

ը)Նպաստել երկրում աղքատության կրճատմանը, մարդկանց բարեկեցիկ կյանքի

ապահովմանը:

թ) Նպաստել Հայաստանում քաղաքական մշակույթի արմատավորմանն ու զարգացմանը, բնակչության գաղափարական և քաղաքական մակարդակի բարձրացմանը:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կուսակցության անդամ կարող է լինել տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր գործունակ քաղաքացի, ով ունի Կուսակցության անդամ լինելու իրավունք և այլ Կուսակցության անդամ չէ:

3.2 Կուսակցությանն անդամագրվում են կամավոր հիմունքներով, անձնական դիմումի հիման վրա՝ Վարչության որոշմամբ և հաշվառվում Տարածքային որևէ ստորաբաժանման մեջ: Յուրաքանչյուր անդամ կարող է հաշվառվել միայն մեկ Տարածքային ստորաբաժանման մեջ:

3.3 Կուսակցության անդամն իրավունք ունի.

ա) Ընտրել և ընտրվել Կուսակցության ու նրա Տարածքային ստորաբաժանումների ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում,

բ) Ներկա լինելու կուսակցության համագումարի նիստերին, ծանոթանալու կուսակցության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները, տեղեկատվություն ստանալու կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ կուսակցության կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու կուսակցության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացությունը:

գ) Բողոքարկել նշված մարմինների որոշումներն ու գործողությունները՝ բացառությամբ օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

դ) Կուսակցության մարմինների քննարկմանը ներկայացնել պետության հասարակական-քաղաքական կյանքի,Կուսակցության գործունեության և այլ հարցերի վերաբերյալ նախաձեռնություններ և առաջարկություններ:

ե) Մասնակցել այն նիստին, որտեղ քննարկվում է իր հետ կապված հարց կամ իր առաջարկությունը, արտահայտել իր կարծիքը այդ քննարկվող հարցերի վերաբերյալ՝առանց որոշում ընդունելուց:

զ) Կասեցնել և վերականգնել իր անդամակցությունը Կուսակցությանը, դուրս գալ Կուսակցության շարքերից՝ իր դիմումի համաձայն:

է) Օգտվել օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

3.4 Կուսակցության անդամը պարտավոր է.

ա) Գործել Կուսակցության Կանոնադրության և Ծրագրի շրջանակներում, չիրականացնել Կանոնադրությանն ու Ծրագրին հակասող գործողություններ,

բ) Նպաստել Կուսակցության նպատակների և խնդիրների իրականացմանը.

գ) Վճարել անդամավճար, որի չափերը և գանձման կարգը հաստատվում են Վարչության կողմից:

դ) Կատարել սույն Կանոնադրության պահանջները:

3.5 Կուսակցության անդամակցությունը դադարում է:

ա) Դիմումի համաձայն Կուսակցությունից դուրս գալու դեպքում: Կուսակցության անդամը գրավոր տեղեկացնում է համապատասխան կուսակցական մարմնին, որը վերջինս ընդունում է ի գիտություն:

բ) Կուսակցությունից հեռացվելու դեպքում:

գ) Կուսակցության լուծարման դեպքում:

դ) Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

4.1 Կուսակցությունն իրավունք ունի՝

ա)Օրենքով սահմանված կարգով մասնակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների նախապատրաստմանն ու անցկացմանը:

բ) Հիմնադրելու զանգվածային լրատվության միջոցներ և հրատարակչություններ:

գ) Ազատորեն տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին, քարոզելու իր գաղափարներն ու նպատակները:

դ) Կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ:

ե) Առանց իրավաբանական անձ կազմավորելու այլ կուսակցությունների հետ ստեղծելու դաշինքներ (միավորումներ):

զ) Կուսակցությունն իրավունք ունի, իր կանոնադրային նպատակներին համապատասխան, տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները:

է) Կուսակցությունն իրավունք չունի լինելու առևտրային իրավաբանական անձի հիմնադիր:

ը) Ազգային ժողովի ընտրություններում կուսակցությունների դաշինքները կարող է կազմավորվել առնվազն երկու կուսակցության կողմից:

4.2 Կուսակցության պարտականությունները

ա) Պահպանել Սահմանադրությունը և օրենքներ:

բ) Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով դրա կազմավորման աղբյուրները:

4.3 Կուսակցության գույքը և կատարվող նվիրատվությունները .

ա) Կուսակցությունը իրավունք ունի գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ վարկերի, փոխառությունների, ինչպես նաև երրորդ անձանց կողմից կուսակցության պարտքի մարման տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական և իրավաբանական անձանցից:

բ) Կանոնադրությամբ և ծրագրով սահմանված նպատակների իրականացման համար կուսակցությունը սեփականության կամ այլ գույքային իրավունքով կարող է ունենալ ցանկացած գույք:

գ) Կուսակցության գույքը գոյանում է՝ կուսակցությանն անդամագրվելու համար միանվագ կատարվող վճարներից (մուտքի վճարներից), սահմանված չափով պարբերաբար կատարվող վճարներից (անդամավճարներից):

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5.1 Կուսակցության ղեկավար մարմիններն են՝ Համագումարը, Վարչությունը, Կուսակցության նախագահը: Վարչությունը Կուսակցության ներկայացուցչական մարմինն է: Կուսակցությունը բաղկացած է Տարածքային ստորաբաժանումներից: Կուսակցության վերահսկողություն իրականացնող մարմինը Վերահսկիչ հանձնաժողովն է: Կուսակցության այլ կառուցվածքային ստորաբաժանումների ձևավորման և լուծարման մասին որոշումը կայացնում է Վարչությունը:

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

6.1 Կուսակցության համագումարը բարձրագույն մարմինն է:

6.2 Կուսակցության համագումարն իրավասու է քննարկելու ցանկացած հարց, որի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի:

6.3 Կուսակցության համագումարի պատվիրակներ ընտրում է տարածքային ստորաբաժանման խորհուրդը՝ տարածքային ստորաբաժանման կառույցում հաշվառված կուսակցականներից:

6.4 Համագումարը կարող է լինել հերթական կամ արտահերթ: Հերթական համագումարը հրավիրվում է 4 տարին մեկ անգամ՝ Կենտրոնական Կոմիտեի որոշմամբ: Արտահերթ համագումար հրավիրվում է Կենտրոնական Կոմիտեի կողմից:

Արտահերթ համագումարը կայանում է ոչ շուտ, քան հրավիրելու մասին Կենտրոնական Կոմիտեի որոշումը կայացնելու տասնհինգերորդ օրը: Հերթական համագումարի հրավիրման

և օրակարգի մասին Կուսակցության անդամներին հայտնվում է ոչ ուշ, քան 14 օր առաջ, իսկ արտահերթ համագումարի դեպքում՝ ոչ ուշ, քան 7 օր առաջ:

6.5 Համագումարն իրավազոր է, եթե ներկա են (գրանցված են) համագումարի պատվիրակների ընդհանուր թվի առնվազն կես-ը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ:

6.6 Համագումարը՝

ա) Ընդունում է Կուսակցության Ծրագիրն ու հաստատում Կանոնադրությունը, նոր խմբագրությամբ կանոնադրությունը և ծրագիրը, փոփոխություններ և լրացումներ կատարում դրանց մեջ՝ բացառությամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների:

բ) Ի գիտություն է ընդունում Կուսակցության նախագահի քաղաքական զեկույցը:

գ) Հաստատում է Կենտրոնական Կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունը:

դ) Հաստատում է Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը:

ե) Ընդունում է որոշում Կուսակցության նախագահի, Կենտրոնական Կոմիտեի և Վերահսկիչ հանձնաժողովի անդամների ընտրության, լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և կազմալուծման վերաբերյալ:

զ) Ընդունում է որոշում Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի առաջադրած Կուսակցության նախագահի՝ ընտրության, լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ:

է) Ընդունում է Կուսակցության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումը: Կուսակցության վերակազմակերպման և լուծարման համար հրավիրված համագումարն իրավազոր է, եթե համագումարին մասնակցում է կուսակցության պատվիրակների ընդհանուր թվի կեսը:

6.7 Կուսակցության համագումարի որոշումները, բացառությամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են համագումարին ներկա պատվիրակների ձայների մեծամասնությամբ:

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

7.1 Կուսակցության նախագահն ընտրվում է Վարչության կողմից առաջադրված Վարչության անդամներից՝ համագումարի պատվիրակների կողմից, ձայների մեծամասնությամբ, չորս տարի ժամկետով, գաղտնի քվեարկությամբ:

7.2 Կուսակցության նախագահը՝

ա) Ի պաշտոնե նաև Վարչության նախագահն է, ղեկավարում է Վարչության աշխատանքները:

բ) Հրավիրում և վարում է Վարչության նիստերը, ստորագրում որոշումները և նիստերի արձանագրությունները,

գ) Ներկայացնում է Կուսակցությունն առանց լիազորագրի, հանդես է գալիս Կուսակցության անունից,

դ) Իրավունք ունի հրավիրել արտահերթ համագումար, Կենտրոնական Կոմիտեի արտահերթ նիստեր,

ե) Ապահովում է համագումարի, Վարչության որոշումների կատարումը,

զ) Իր իրավասության սահմաններում որոշումներ է կայացնում Կուսակցության գործունեության ընթացիկ հարցերի վերաբերյալ և ստորագրում է հրամաններ, կարգադրություններ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր, Կուսակցության անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր,

է) Կուսակցության համագումարին ներկայացնում է Վարչության հաստատած քաղաքական զեկույցը:

ը) Հաշվետվություն է ներկայացնում Համագումարում՝ Վարչության կատարած գործունեության վերաբերյալ:

թ) Օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կուսակցության գույքը և միջոցները,

ժ) Վարչության հաստատմանն է ներկայացնում Կուսակցության աշխատակազմի հաստիքացուցակը և դրույքաչափերը, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կուսակցության աշխատակազմի աշխատողներին,

ժա) Ընտրում է Կուսակցության գրասենյակի տնօրեն և մամուլի պատասխանատու,

ժբ) Կուսակցության անունից հաստատում, ստորագրում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,

ժգ/ Իրականացնում է սույն Կանոնադրությամբ և Կուսակցության համագումարի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ,

7.3 Կուսակցության նախագահի բացակայության ընթացքում՝ նրա պարտականությունները կատարում է Կուսակցության նախագահի տեղակալը, իսկ եթե հնարավոր չէ՝ Վարչության տարիքով ավագ անդամը:

8.ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

8.1 Վարչությունը մշտական գործող ղեկավար (գործադիր) մարմինն է, ընտրվում է համագումարում պատվիրակների կողմից՝ ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ և բաղկացած է 9 անդամից:

Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում Կուսակցությունը ղեկավարում է Վարչությունը: Վարչությունը ընտրվում է համագումարի կողմից՝ չորս տարի ժամկետով: Համագումարը Վարչության անդամներ է ընտրում/հաստատում/ 10 մարզերի նախագահներին և Երևան քաղաքային կոմիտեի նախագահ, մանդատային հանձնաժողովի զեկուցման հիման վրա:

8.2 Կուսակցության Վարչությունը՝

ա) Որոշում է կայացնում հերթական և արտահերթ համագումար հրավիրելու մասին, սահմանում է համագումարի պատվիրակներ ընտրելու կարգը, ստորաբաժանումներին տրվող համամասնությունը, հաստատում է համագումարի օրակարգի նախագիծը:

բ) Կազմակերպում, ղեկավարում է Կուսակցության համագումարի որոշումների կատարման ընթացքը:

գ) Հաստատում է կուսակցության տարեկան բյուջեն, որոշում է ընդունում անդամավճարների չափերի, գանձման կարգի վերաբերյալ և սահմանում է անդամավճարներից առաջացող գումարների, գույքի և ֆինանսական այլ միջոցների տնօրինման կարգը:

դ) հաստատված տարեկան բյուջեի հիման վրա հաստատում է կուսակցության ծախսերի նախահաշիվը:

ե) կուսակցության անունից կնքում է քաղաքացիաիրավական գործարքներ:

զ) Կուսակցության անդամների և տարածքային ստորաբաժանումների ներկայացրած առաջարկությունների հիման վրա հաստատում է ՀՀ ԱԺ ընտրություններին և Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների ավագանիների ընտրություններին մասնակցելու՝ Կենտրոնական Կոմիտեի կողմից ձևավորված Կուսակցության ընտրական ցուցակները:

է) Որոշում է չափորոշիչներ՝ ընտրովի պաշտոններում Կուսակցության կողմից առաջադրված թեկնածուների վերաբերյալ:

ը) Որոշումներ է ընդունում Կուսակցության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց կանոնակարգերը:

թ) Որոշում է ընդունում անձին Կուսակցության շարքերն ընդունելու և Կուսակցության շարքերից հեռացնելու մասին:

ժ) Ընդունում է ներկուսակցական ակտեր (որոշում, հանձնարարական, հրահանգ, հայտարարություն և այլն)՝ բացառությամբ նրանց, որոնք Համագումարի, Կուսակցության նախագահի, Կենտրոնական Կոմիտեի և Վերահսկիչ հանձնաժողովի բացառիկ իրավասությունների շրջանակներում են:

ժա) Քննարկում և որոշումներ է կայացնում Կուսակցության գործունեությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ:

ժբ) Որոշում է կայացնում Կուսակցության լուծարման մասին, եթե Համագումարն իրավազոր չի եղել:

8.3 Կուսակցության Վարչությունը կարող է օրենքով սահմանված կարգով այլ երկրներում բացել ներկայացուցչություններ, որոնք տվյալ երկրում Վարչությունը կամ Կուսակցության նախագահի հանձնարարությամբ հանդես կգան Կուսակցության անունից, ինչպես նաև տվյալ երկրում գտնվող քաղաքացիների շրջանում իրականացնեն Կուսակցության գաղափարախոսության քարոզչությունը, կատարեն Կուսակցության վերադաս մարմինների որոշումներն ու հանձնարարությունները

8.4 Վարչության նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում է Վարչությունը անդամների ընդհանուր թվի 2/3-ը: Որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Կուսակցության նախագահի ձայնը վճռորոշ է:

8.5 Վարչությունը նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Վարչությունը արտահերթ նիստերը հրավիրվում են Կուսակցության նախագահի կամ Վարչության անդամների 1/4-ի նախաձեռնությամբ: Վարչության արտահերթ նիստն իրավազոր է, եթե դրա անցկացման օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցվել են Կուսակցության բոլոր անդամները և արտահերթ նիստին մասնակցում են Վարչությունը անդամների 2/3-ը:

8.6 Վարչության անդամը պարտավոր է մասնակցել Վարչության նիստերին:

8.7 Վարչության անդամի լիազորությունները դադարեցվում են Կուսակցության համագումարի որոշմամբ՝

ա) Կուսակցությանը անդամությունը դադարեցնելու դեպքում,

բ) Հրաժարականի դեպքում,

գ) Այն դեպքում, երբ նա երեք ամիս անընդմեջ անհարգելի պատճառով չի մասնակցում Վարչության նիստերին,

դ) Նրա մահվան դեպքում:

8.8 Վարչության անդամի լիազորությունները դադարելու դեպքում Վարչության կազմը չի համալրվում, և որոշումներն ընդունվում են տվյալ պահին Վարչության անդամի լիազորություններ ունեցողների ընդհանուր թվի հաշվառմամբ:

8.9 Վարչության նիստերի արդյունքներով կազմվում է գրավոր արձանագրություն, որը ստորագրվում է Կուսակցության նախագահի և նիստն արձանագրող քարտուղարի կողմից:

9. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

9.1 Կուսակցության Տարածքային ստորաբաժանումները ստեղծվում են տարածքային հատկանիշներով՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքի վարչական շրջաններում: ՀՀ տարածքից դուրս Կուսակցությունը կարող է ունենալ ներկայացուցչություններ:

9.2 Կուսակցության Տարածքային ստորաբաժանումները ստեղծվում և լուծարվում են Կուսակցության Վարչության որոշմամբ:

9.3 Կուսակցության Տարածքային ստորաբաժանման անդամների խորհուրդը հրավիրվում է չորս տարին մեկ անգամ: Տարածքային ստորաբաժանման անդամների ժողովը իր կազմից ընտրում է Տարածքային ստորաբաժանման ղեկավար՝ Նախագահ, Տարածքային խորհուրդ և վերահսկիչ մարմին՝ գաղտնի քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ՝ չորս տարի ժամկետով:

9.4 Կուսակցության Տարածքային ստորաբաժանման ղեկավար մարմինը Տարածքային խորհուրդն է, որը բաղկացած է հինգ անդամից՝ Տարածքային ստորաբաժանման նախագահից և բաց քվեարկությամբ ընտրված չորս անդամներից, որոնք ընտրվում են ձայների պարզ մեծամասնությամբ՝ չորս տարի ժամկետով: Կուսակցության Տարածքային ստորաբաժանման Տարածքային խորհուրդը Կուսակցության Վարչության կողմից սահմանված կարգով ընտրում է Կուսակցության Համագումարի պատվիրակներ, հրավիրում է Տարածքային ստորաբաժանման արտահերթ նիստեր, իրականացնում է Տարածքային ստորաբաժանման գործունեությունը համակարգող աշխատանքներ, հաշվետվություն է ներկայացնում Վարչությանը: Տարածքային ստորաբաժանման ղեկավարը՝ Նախագահը, ղեկավարում է Տարածքային ստորաբաժանման և Տարածքային խորհրդի գործունեությունը, հաշվետվություն է ներկայացնում Վարչության՝ Տարածքային ստորաբաժանման գործունեության, Տարածքային ստորաբաժանմանը հատկացված գույքի օգտագործման և կառավարման վերաբերյալ, համակարգում է, կազմակերպում է Կուսակցությանն անդամակցելու նպատակով Տարածքային ստորաբաժանմանը դիմած քաղաքացիների անդամագրման, դիմումների ներկայացման աշխատանքները:

9.5 Կուսակցության Տարածքային ստորաբաժանումն իր անդամների կողմից ձայների պարզ մեծամասնությամբ, չորս տարի ժամկետով, գաղտնի քվեարկությամբ ընտրում է վերահսկող անդամ, որը կարող է պահանջել և հնգօրյա ժամկետում ստանալ Տարածքային ստորաբաժանման գործունեությանն առնչվող ցանկացած տեղեկատվություն, իրականացնում է Տարածքային ստորաբաժանման կանոնադրական և ֆինանսատնտեսական գործունեության

վերահսկողություն և պարտավոր է դրա վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնել Կուսակցության Վերահսկող հանձնաժողովին և Կուսակցության Համագումարին:

9.6 Կուսակցության Տարածքային ստորաբաժանման խորհրդի նիստերը կարող են լինել հերթական և արտահերթ: Հերթական նիստեր հրավիրվում է տարին չորս անգամ՝ Տարածքային ստորաբաժանման ղեկավարի նախաձեռնությամբ: Արտահերթ նիստը հրավիրվում է Վարչության նախաձեռնությամբ կամ Տարածքային ստորաբաժանման խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:

9.7 Վարչության կողմից հաստատված և հատկացված նյութական միջոցների ու գույքի կառավարումը վերապահված է տվյալ Տարածքային ստորաբաժանման ղեկավարին:

9.8 Կուսակցության Տարածքային ստորաբաժանումն իրավասու է ունենալ Վարչության կողմից իրեն հատկացված գույքը և տնօրինել՝ մինչև իր լիազորությունների ավարտը:

10. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

10.1 Կուսակցության Վերահսկիչ հանձնաժողովը նյութական ու ֆինանսական միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինն է. Ընտրվում է Կուսակցության Համագումարի կողմից՝ չորս տարի ժամկետով, ձայների մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ:

10.2 Վերահսկիչ հանձնաժողովը՝

ա) Վերահսկիչ հանձնաժողովը Կուսակցությունում ցանկացած ժամանակ կարող է անցկացնել ստուգում՝ իր լիազորությունների սահմաններում,

բ) Կարող է ծանոթանալ Կուսակցության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին,

գ) Կարող է առաջարկներ ներկայացնել Կուսակցության ղեկավար մարմիններին,

դ) Կարող է Կուսակցության նախագահից կամ Վարչությունից, շարքային անդամներից ու աշխատողներից պահանջել և ստանալ Կուսակցության գործունեությանն առնչվող տեղեկություններ,

ե) Եզրակացություն է տալիս Կուսակցության գործունեության, ֆինանսական միջոցների և գույքի օգտագործման հաշվետվության վերաբերյալ,

զ) Հաշվետվություն է ներկայացնում Կուսակցության Համագումարին:

10.3 Վերահսկիչ հանձնաժողովի անդամը չի կարող լինել Կուսակցության ղեկավար որևէ մարմնի անդամ:

10.4 Վերահսկիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ, որը համակարգում է Վերահսկիչ հանձնաժողովի աշխատանքները:

10.5 Վերահսկիչ հանձնաժողովի անդամները կարող են խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել Վարչության և Տարածքային ստորաբաժանումների խորհուրդների նիստերին:

10.6 Վերահսկիչ հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին երկու անգամ՝ հանձնաժողովի նախագահի կողմից: Վերահսկիչ հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրում է հանձնաժողովի նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ Վերահսկիչ հանձնաժողովի և Վարչության որևէ անդամի պահանջով:

10.7 Վերահսկիչ հանձնաժողովի նիստերը կայանում են նրա անդամների 2/3-ի մասնակցությամբ, որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Յուրաքանչյուր նիստում կազմվում է արձանագրություն՝ հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ:

10.8 Վերահսկիչ հանձնաժողովը գործում է իր լիազորությունների շրջանակներում իր կողմից հաստատած կանոնակարգով, եթե այլ բան չի սահմանվել կուսակցության Համագումարի կողմից:

11. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ, ԿԻՐԱՌՈՒ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

11.1 Կուսակցության Կանոնադրության խախտման, ծրագրային դրույթներից և սկզբունքներից շեղվելու դեպքում Վարչության համապատասխան բողոքի հիման վրա իրավասու է ստեղծել քննող հանձնաժողով, որը պետք է քննի ու կազմի զեկույց և այն ներկայացնի Վարչությանը: Վարչության վերոնշյալ զեկույցի հիման վրա իրավասու է ընդունել որոշում՝ Կուսակցության անդամի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառելու վերաբերյալ:

11.2 Կարգապահական պատասխանատվության տեսակներն են՝

ա) Նախազգուշացում,

բ) Նկատողություն,

գ) Կուսակցությունից հեռացում (Կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների անդամների դեպքում՝ Վարչության կողմից առաջարկություն է ներկայացվում Համագումարին տվյալ անդամի լիազորությունները ղեկավար կամ վերահսկողություն իրականացնող մարմնում դադարեցնելու վերաբերյալ, որի հաստատման դեպքում Վարչությունն իրավասու է որոշում կայացնել տվյալ անդամին Կուսակցությունից հեռացնելու վերաբերյալ):

12.ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

12.1 Կուսակցությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքի, ոչ նյութական ակտիվների ու դրամական միջոցների ձեռքբերման աղբյուրներ կարող են լինել օրենքով սահմանված կարգով կատարված նվիրատվությունները, կուսակցական անդամավճարները, օրենքով նախատեսված կարգով բյուջետային ֆինանսավորումը, օրենքով սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելվող այլ աղբյուրներից ստացված եկամուտները:

12.2 Կուսակցության հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով Կուսակցությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Կուսակցության սեփականությունն է: Կուսակցության հիմնադիրները և անդամները Կուսակցության՝ որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ անդամավճարների) նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն Կուսակցության պարտավորությունների, իսկ Կուսակցությունը իր հիմնադիրների և անդամների պարտավորությունների համար:

13. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

13.1 Կուսակցության վերակազմակերպումը (միաձուլվել, միանալ, բաժանվել կամ առանձնանալ) կատարվում է Համագումարի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

13.2 Կուսակցությունը լուծարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով:

13.3 Եթե Կուսակցության լուծարման համար հրավիրված Համագումարն իրավազոր չէ, ապա Կուսակցության լուծարման մասին որոշումն ընդունում է Վարչությունը հիմնադիրների ընդհանուր թվի 2/3-ով:

13.4 Եթե Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ արգելվել է Կուսակցության գործունեությունը, ապա Կուսակցության նկատմամբ սկսվում է լուծարման գործընթաց: Այս դեպքում լուծարային հանձնաժողովի իրավասություններն իրականացնում է օրենքով սահմանված կարգով, լիազոր մարմնի կողմից ստեղծված հանձնաժողովը:

13.5 Սույն Կանոնադրությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: